

2013

ՊԱՆԾԱԼԻ

ՀԱՐԻԻՐԱՄԵԱԿ ՄԸ

ՍՈՒՐԲ ՓՐԱՆԿԻՍԿՈՍ ԱՍԻԶԱՑԻ

235

Վ-31

Կ. ՊՈԼԻՍ

Զպագր. Ս. Մ. ՍԷԹԵԱՆ

1926

235

Կ - 31

2001

2070

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՍ ԱՌԻԹՅՆ ՈՒ ՆՊԱՏԱԿԸ



Իտալացի ծանօթ հրապարակագիր մը եւ ատենարան (Lo-niolo) իրաւունք ունէր գրելու թէ ներկայ ընկերութիւնը չպիտի կարենան փրկել ո՛չ մեծ դիւանագէտ մը, ո՛չ մեծ ընկերաբան մը, ո՛չ ալ մեծ տնտեսագէտ մը. այլ միայն մեծ սուրբ մը :

Այդ մեծ Սուրբերը աննոխազ յաջորդութեամբ իբրեւ զաստղ քան զաստղ փայլուն Կաթողիկէ Եկեղեցոյ Սրբութեան նշանաբանը արդարացնելէ զատ, մարդկային ցեղի պատիւն ալ փրկած են յաւէտ :

Ասոնցմէ մին եղած է Ս. Փրանկիսկոս Ասսիզացի, որ մեծ հիմնադիրն է հոյակապ Միաբանական կարգերու մը եւ իր սրբութեան առանձնայատուկ բանաստեղծութեամբը հմայած է երկիրս ու երկինքը, ու ցայսօր ամենաթողութեամբ Սուրբերէն է համակրելի ու աշխարհահռչակ բառին ամբողջ ընդարձակութեամբը :

Այսպիսի Սուրբի մը մահուան եօթներորդ հարիւրամեայ տարեդարծին, Իտալիա ու բոլոր Կաթողիկէ աշխարհը տօներ սարքած է, որոնց շարք մ'ալ իրաւամբ կուգան կազմել Կ. Պոլսոյ մէջ գտնուող Փրանկիսկեան Կարգի երեք ճիւղաւորումներն :

Այս տօնախմբութեանց մենք ալ հրաւիրուեցանք մասնակցելու եւ պիտի տօնակցինք մեր ծիսի ամբողջ հանդիսաւորութեամբ ու այդ առթիւ է որ սիրայօժար կը հրատարակենք Սերովբէակենցաղ Սրբոյս համառօտ կենսագրութիւնը, զոր Գեր. Ներսէս Յ.Վ. Փափազեան իր ոճի օժութեամբ եւ լեզուի ընտրութեամբ զիտցած է յատակօրէն ամփոփել դիւրմբունելի ընելով ամէնուն կեանք մը ներքին ու հոգեկան, որ ունեցած է աստուածամերձ ամենալսեմ խորհրդաւորութիւն մը :

Ըլլայ սա յարգանքի փոքր արտայայտութիւն մը մեր կողմանէ առ մեծանուն Սուրբը, որ կը կարծուի թէ Հայ ազգի եղած ըլլայ իր հօր կողմանէ, եւ երախտագիտութեան հաւաստիք մը իւր բարերար Միաբանութիւններուն, որոնք մեր ազգին ալ մատուցած են թանկագին ծառայութիւններ նոյնիսկ դժուար օրերու մէջ :

† ԵՌԱՎԱՆՆԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱԶԻԵԱՆ  
Առաք. Այցելու եւ Ընդհ. Փոխանօրդ  
Հ. Կ. Պատրիարքարեան

ՍՈՒՐԲ ՓՐԱՆԿԻՍԿՈՍ ԱՍԻԶԱՅԻ


Աստուած իմ եւ ամենայն ինչ իմ:» Ս. Փ. Ա.

Ա.

Իտալիոյ Ումպրիոյ գաւառին Ասիզի քաղաքը ծնաւ 1182 Սեպտ. 26ին եւ մեռաւ 1226 Հոկտ. 3ին այն սրոյ եօթներորդ հարիւրամեակը կը կատարեն այսօր հարիւրաւոր ազգեր ու ջեղեր եւ բիւրաւոր քաղաքներ ու գիւղեր: Ամբողջ քաղաքակիրթ աշխարհն՝ նորադարձ ժողովրդոց հետ՝ Հասվմէն յՈւաշինկզքն, Բարիզէն ի Սիանէ, Լոնտոնէն ի Բէքին, Պեուլինէն ի Բոնդորիա գիտուն ու պերճախօս լեզուներ ինչպէս համեատ եւ խոնարհ հողիներ կը հուշակեն փառքն անոր որուն միակ փառասիրութիւնն եղաւ յերկրի ճառայել Աստուծոյ եւ մարդկութեան:

Իւր հայրը մեծահարուստ վաճառական կը կոչուէր Պետրոս Պեռնարտոնէ, եւ մայրը Բիգա, փրանսոացի ծաղուժով, որ ի բացակայութեան հօր՝ մանկան անուէր դրաւ Յովհաննէս, գար յետոյ հայրը Ֆրանսայէն դառնալով ի յարգանս իւր կնոջ եւ այն երկրին ուր հարստացած էր՝ փոխեց Ֆրանսուայի: Իրէ առաջ ո՛չ սք կրած էր այս համակրելի անունն որ նախասահմանուած էր ելնելու այնչափ անգամներ սրբատաշ խորաններու եւ արքայաշուք կայսերայեան գահոյից վրայ:

Փրանկիսկոս տարրական ուսում մ'ընելէ վերջ՝ սկսաւ իւր հօր օգնել առեւտրոյ մէջ. արթուն, գործունեայ ու ճարպիկ ըլլալով՝ հայրը կը յուսար իրեն արժանաւոր յաջորդ մ'առնելու իւր որդւոյն մէջ, որ նաև պճնասէր, երեսակայտ եւ զգայուն՝ աւելի հաճոյք կը գտնէր բանաստեղծութեան եւ իր հասակակիցներու ընկերութեան մէջ քան առեւտրական ձեռնարկութեանց եւ հաշիւներու մէջ: Վեհանձն եւ նոյնիսկ շատ ըլլալով՝ դժգոհութեան եւ արտունջի առիթ տուաւ ստէպ իւր ծնողին որ, — ըստ բաւականի ազան ու արծաթասէր —, իրճահարութիւնը արժանացնէր իր արժանիքները: Իր արժանիքները արժանացնէր իր արժանիքները: Իր արժանիքները արժանացնէր իր արժանիքները:



2012-67

2012

Ծանր հիւանդութիւն մը որ զինք մահուան վտանգի մէջ դրած էր, իրեն օգտուէտ դաս մ'եղաւ. «պաքինամ՝ աշխարհի իրերը կրցաւ տեսնել իրենց ճշմարիտ արժէքով, այսինքն իրենց անգարմանելի ունայնութեան ու յոգնապատիր խարէութեան մէջ. այնուհետեւ յաւիտենական ճշմարտութեանց եւ անզրգերեզմանական իրականութեանց ճայնն սկսաւ խօսիլ՝ աւելի ազդու եւ պայծառակերպիչ՝ իւր բարձր ու ազնուատենչ հոգւոյն: Կարեկից եւ դորովայիւր բոլոր տատապիւոց հանդէպ, կ'օգնէր ատառաձեւն կերպիւ ամեն անգամ որ հանդիպէր աղքատաց: Դրապէս կրօնասէր նորոգեց Ս. Դամիանոսի եկեղեցին, Ս. Պետրոսի եւ Հրեշտակաց Թագուհւոյն մատուռները: Վսեմ փառասիրութիւն մը զինք կը տանջէր, բայց դեռ որոշ էր գիտէր թէ ի՞նչ էր իւր կոչումը: Խոնարհ ու ետանդուն մաղթանք կը ինզրէր լոյսն Հոգւոյն Սրբոյ:

Երկինք պատասխանեց իւր աղօթից: 1209 փետր. 24ին կը կատարէր Եկեղեցին Ս. Մատաթիա Առաքելոյն տօնը. Փրանկիսկոս ներկայ Ս. Պատարագի, լսեց Աւետարանին աստուածախօս պատգամը. «Մի՛ ինչ բառնայք ի նանապարհ, մի՛ գաւազան եւ մի՛ մախաղ, մի՛ հաց եւ մի՛ արձաք, մի՛ երկուս հանդերձս ունիցիք:» (Մատթ. Թ. 3.) Այս յորդորն իրեն ուղղեալ համարելով՝ ըսաւ. «Աւասիկ ինչ որ կը փնտսէի ի վաղուց:» Նետեց զգուանօք իւր քսակը, գաւազանը, կօշիկները, եւ զգնելով մոխրագոյն պարեգօտ մը՝ չուանայ գօտիով՝ սկսաւ ապրիլ Ապրիլինեան լեռանց ամէնէն թշուառ մարդիկներուն պէս, զուրկ ամէն երկրաւոր գիւրութիւններէ եւ հանգստենէ, չքուոր յետին աստիճան՝ բայց հարուստ խոնարհութեամբ, մաքրութեամբ, համբերութեամբ, երկնային շնորհօք եւ աստուածային սիրով:

Աստուծոյ փառաց եւ հոգիներու փրկութեան անձկատենչ, ու Առաքելոյ կոանդեամբ ոգեւորեալ՝ սկսաւ իւր քարոզներն, որք ճարտարախօս հանդիսաւոր ճառերու չէին նմանիր բնաւ, այլ զրեթէ պարզ խօսակցութիւններ էին, լի աւետարանական օժութեամբ, բարեպաշտութեամբ եւ վսեմ մտածութիւններով: Ո՛րչափ խաղաղութիւն ընտանեաց եւ ընկերութեան մէջ, ո՛րչափ առելութիւններ մարած, քանի՛ մեղքեր ու գայթակղութիւնք դադրած, ո՛րչափ բարեգործութիւններ աւելցած, քանի՛ սրբատենչ իղձեր ի դրժմ դրուած ամենուրեք, ու այս ամենն արգասիք այդ անպաճոյճ ու առաքելաշունչ քարոզութեան:

52559-46

Երկու տարի սոյն խոտակեաց կեանքն առանձին վարելէ վերջ՝  
ունեցաւ նա ընկերներ, որք իւր առաքինազարդ օրինակէն ազ-  
դուած՝ թողին ամէն ինչ և հետեւեցան իրեն կատարեալ անձնու-  
րացութեամբ և յոգնագիմի գրկանօք:

Առաջինն էր Ասիղի բարեպաշտ ու ամենէն հարուստ քաղա-  
քայիներէն մին, Բեռնարդոս Քուինզավալլէ, որ իւր բոյր ըս-  
տացուածքը բաշխեց աղքատաց, ուզելով հաւատարմօրէն ի գործ  
գնել Աւետարանի խրատը. «Եթէ կամիս կատարեալ լինել, ե՛րբ՝  
վաճառե՛ա զինչս քո եւ տո՛ւր աղբասաց, եւ ունիցիս զանձն յեր-  
կինս, եւ ե՛կ զկնի իմ:» (Մատթ. ԺԹ, 21.): Ամէնէն զմեղակ ու  
տաժանելի աղքատութեան հետ բացարձակ ողջախոնութեան և  
հնազանդութեան պարտաւորեալ էին ամէնքն այլ բայց աղօթից  
պարտականութեան մասին իւրաքանչիւր ուր կը հետեւէր իւր  
անհատական բարեպաշտութեան ներշնչմանց: Երբ տասներկու ջեր-  
մեռանդ աշակերտներ տեսաւ Փրանկիսկոս իւր շուրջ, զգաց միօ-  
րինակ կանոնի մը հարկաւորութիւնը. և գրեց այն համառօտ և  
ամենապարզ կանոնը, որ եօթն դարէ ի վեր բխրաւոր հոգիներ  
առաջնորդեց սրբութեան և ամէնէն վսեմ կատարելութեան:

Գիտնալով թէ Ս. Եկեղեցւոյ մէջ ամէն կարեւոր ձեռնարկ՝  
յաջողապէս կը կարօտի Գերագոյն Քահանայապետին օրհնութեան  
յարատեւելու համար գնաց ի Հռովմ, և իւր կանոնին հաստատու-  
թիւնը խնդրեց Իննսովկենտիոս Գ.է, որ յետ մանրազնիւնքննու-  
թեան վաւերացուց զայն, ու քաջալերեց իմաստուն յորդորներով  
հիմնադիրն ու իւր ընկերները, որոնք մեծապէս մխիթարուած,  
հոգեւոր ուրախութեամբ լցեալ փութացին դառնալ իրենց մենա-  
րանք: Աղօթքով ու ապաշխարութեամբ պատրաստուեցան քարո-  
ղելու ժողովրդոց հաւատոյ ճշմարտութիւններն և Աւետարանի բա-  
րոյշականը: Ամէնքն ալ կղերիկոս եղած, և Փրանկիսկոս ձեռնադ-  
րուած էր սարկաւազ, չուզելով քահանայութեան վսեմ ատրիճա-  
նին բարձրանալ՝ հակառակ ամէն թախանձանաց. զի իւր ծայրա-  
գոյն խոնարհութեամբ ինքզինք անարժան կը համարէր, Քահա-  
նայութեան և այն համոզումը չիտխեց մինչև իւր սրբաբոյր մահը:

Այս առաջին կրօնաւորաց վարքն աննմանօրէն շինիչ ըլլալով,  
ամեն դասակարգէ անձինք կը բաղձային նոյն կենօք ապրել. քիչ  
ժամանակի մէջ անոնց թիւն աճեցաւ զարմանալի կերպիւ, այն-  
պէս որ 1219ին հասած էր մինչև եօթն Լազարի: Պաշտօնապէս  
կը կոչուէին «*Crusce* եղբարք, *Frați Minoris*», որոնք յետոյ այլ-

և այլ ճիւղերու բաժնուեցան զգետի և երկրորդական կանոննե-  
րու զանազանութեամբ, բայց միշտ իրենց հայր ու հիմնադիր  
ճանչնալով զՍ. Փրանկիսկոս: Բոլոր այս ճիւղերն ուրիշ անուամբ  
կը կոչուին նաև «*Ordo S. S. Seraphique*», իրենց  
հիմնադիրն երկնաձանդէտ առաքինութեանց և սուրբէաշունչ նի-  
րոյն պատճառաւ: Այս Միաբանութիւնն է որ աշխարհս հոգանիւթ  
հրեշտակներով լեցուց, որոնք կը փայլին այսօր ո՛չ միայն տիե-  
զերական Պատմութեան էջերուն մէջ, այլ նաև մեր նուիրական  
խորաններուն վրայ՝ առարկայ յարգանաց և պաշտաման վերա-  
ծրնեալ մարդկութեան: Փա՛ռք և օրհնութիւն անոնց որք կը  
կոչուին Ս. Բոնավենդուրա, Ս. Բեռնարդինա Աննալի, Ս. Պետ-  
րոս Այդանդարեան, Ս. Յովսէփ Լէոնիս, Ս. Յովսէփ Գաբիու-  
զրան, Ս. Փելլիքս Գանդալիչէ, Ս. Յովսէփ Կորբրոյինեան, Ս.  
Փրանկիսկոս Սուլանօ, Ս. Լաւրենտիոս Պրինդիլի, Ս. Բասիլիդ,  
Ս. Լէոնարդոս, և այլք բազում: Անհաշուելի է նաև թիւն անոնց,  
որք իբրև զիտուն, ցատուածաբան, խմաստասէր, գրագէտ, քա-  
րոզիչ և մարտիրոս ծառայած են Աստուծոյ, և յո՛յս ու բարի՛ք  
սիրած իշխանաշուք ապարանից և զեղջկական հիւղակներու եկե-  
ղեցեաց և ուսումնապետ՝ կաճառներու: Քաղաքակրթութիւն և  
կրօնք, Գիտութիւնք և Գեղարուեստ յաւերժապէս երախտագէտ  
են անոնց:

F.

Կինն որ Աւետարանի առաջին օրերէն ի վեր՝ յոյժ պատուա-  
բեր զեր մը կատարած է քրիստոնէութեան մէջ, բերաւ նաև իր  
բեղուն օժանդակութիւնն նորահաստատ Միաբանութեան: Ասիղի  
քաղաքը հարուստ ու ազնուական բնտանեաց զուտարն էր Գլարա,  
(Պայծառ) ծնեալ 1194ին, ուշիմ, բարեսիրտ, համեստ ու մաքրա-  
տենչ հոգի մը, զոր երբեք չէին կրցած ձգել իրենց պիղծ որս-  
գայթից մէջ ունայնութիւնք և հաճոյք աշխարհի: Երկնային վի-  
հատենչ փառասիրութիւն մը կը յորգորէր զայն մշտապէս՝ նուիրել  
կեանք, զեղեցկութիւն, երիտասարդութիւն և ամէն ինչ իւր  
պաշտելի Փրկչին Յիսուսի: Նոր Առաքելոյն և անոր աշակերտաց  
օրինակն իբրև զիւթիչ իտէալ կը ձառագայթէր իւր սրտին և երե-  
ւակայութեան. առանձին խօսակցութիւն մ'ունենալով անոր հա՛-  
պարդեց իւր հոգւոյն վիճակն ու տենչանք: Փրանկիսկոս տեսնե-  
լով ճշմարիտ կրօնաւորական կոչում այդ անբիծ ու զիւստի օրի-

որդին վրայ, հայրական յորդորներով խրախուսեց զայն, որ գիտակ ծնողաց ընդդիմութեան, որոշեց զազանի փախչիլ ընտանեկան յարկէն, և հետեւել մեծանուն հիմնադրին հոգեւոր առաջնորդութեան: Փրանկիսկոս անոր գեղեցիկ մագերէ կտրելով, մխրագոյն զգեստ և սև քօղ մը տուաւ, և նուիրեց զայն Աստուծոյ տասնեւութ գարուններու հրապոյրներով և անուշահոտութեամբն համայն:

Պայծառի կրտսեր քայրն Ազնէս հիացմամբ յափշտակուած ի տես այս սխրայի կոչման, ինքն ևս հաղիւ տասնեւորս տարեկան՝ զազանի մեկնեցաւ տունէն միեւնոյն սուրբ նպատակաւ: Այս անգամ ծնողաց և ազգականներու կատաղութիւնն այլևս չափ ու սահման չճանչցաւ, յանդգնօրէն վանք խնդրելով, բռնի դուրս հանեցին հրեշտակային կոչքը, մագերէն քաշքշելով, նախատելով և անդթօրէն ձեռնարկ: Բայց իւր առաքինի քոյրն ազօթքով օգնութեան հասաւ իրեն, և հրաշքով ազատեց զայն մոլեցիկն զահիճներուն ձեռքէն: Ուրիշ օրիորդներ ևս փութացին միանալ անոնց, և երբ բաւական թիւ մը կազմեցին՝ թողով Բենետիկ տեան կուսանաց վանքը, քաշուեցան առանձին մենաստան մը, ուր Փրանկիսկոս և իւր կրօնաւորք կուգային կանտուորապէս պէտք եղած հոգեւոր ծառայութիւնները մատուցանելու:

Ահա այս կերպով հիմնուեցաւ Փրանկիսկեանց Երկրորդ Կարգն, որ կը կոչուի Միաբանութիւն Սրբուհոյն Պայծառի կամ Աղքատ Տիկնանց: Անոնց գլխաւոր պաշտօնն է ազօթքով և մահացուցմամբ օգնել իրենց կրօնաւոր եղբարց, արգիլել աստուածաստութեան և արգարութեան շանթերն, ընդունիլ մեղաւորաց զարծը և զանազան շնորհքներ բովանդակ մարդկութեան, անխորտիր բարեխօս հանգիստանալով յօգուտ կաթաղիկից և ոչ-կաթաղիկից, հեթանոսաց ու անհաւատից:

Սոյն հաւատաւոր կուսանաց Ուխտն է որ պարգեւեց եկեղեցոյ Սրբուհի Պայծառէ և Սրբուհի Ազնէսէ վերջ՝ մեծ և բազմարդիւն սրբուհիներ, որոնց ամենէն տիեզերահազակներն են Սրբուհի Գոյէկ, Սրբուհի Վերանիգա ձուլիանի, Երանուհի Մարիամ-Մաղպաղինէ, Մարգինէկօ, Երանուհի Պաղարա Վառանի, Երանաշնորհ Մարիամ Թևկրէտա, Երանաշնորհ Քերովրինա, և զեռ ուրիշ հազարաւորք, որոց գերմարդկային դիւցազնութիւնք պատիւ բերին փափուկ սեռին և ընդհանուր քրիստոնէութեան:

Գ.

Շատեր Ս. Փրանկիսկոսի քարոզները լսելով կը փափաքէին բոլորովին հրաժարիլ աշխարհէ, և լուծեան և առանձնութեան մէջ ապահովիլ իրենց յաւիտենական փրկութիւնը, բայց բնական և յաճախ ընկերային կապեր արգելք կ'ըլլային: Սուրբը հասկցուց անոնց թէ վիճակի-պարտուց մէջ պէտք է տեսնել Աստուծոյ կամքը, և խորհեցաւ յարմարագոյն միջոց մը գտնել՝ հոգեւոր փրկութիւնը և քրիստոնէական առաքինութեանց յարատե գործադրութիւնը դիւրացնելու համար: Հոգեւոր Սրբոյ լոյսը խնդրելէ վերջ հիմնեց իւր Երրորդ Կարգը (Tiers-Ordre), որում կրնային անգամ դուրս ափն վիճակի և աստիճանի անձինք, հարուստք, ազքատք, ամուրիք, ամուսնացեալք, թագաւոր և թագուհիք, քահանայք, եպիսկոպոսք, ժիւրանաւորք և քահանայապետք, մասնակից ըլլալով հոգեւոր ժառանգակցութեամբ Աւաջին և Երկրորդ Կարգի բարեգործութեանց, ազօթից, ապաշխարութեանց, Ս. Պատարագաց և բոլոր արդեանց:

Մշտարթուն և իմաստուն Հայրապետք Հովմայ հաստատեցին գերագոյն իշխանութեամբ, և ճոխացուցին մասնակի ու լիակատար ներդրութիւններով այս նոր Միաբանութեան, որ եղաւ ստուգիւ գիւղաբն մը ամենազգի լուծութեանց, բարեպաշտութեան, յաւատարմութեան, ազատութեան և հաստատութեան և ճշմարիտ քաղաքակրթութեան:

Արդարեւ Երրորդ Կարգի Եղբարք և Քոյրք աշխարհի մէջ իրենց գիրքը պահելով հանդերձ՝ կ'առանձնէին այնպիսի պարտականութիւններ, որոց անվրէպ արգիւնքը պիտի ըլլար մարտնչութեանց և անխրաւութեանց նուազում և բարի գործքերու նոր ու փայլուն փթթում մ'ընկերութեան ամէն խաւերուն մէջ: Անոնք պարտաւոր էին ա. հրաժարիլ ամեն տեսլութենէ և հակառակութենէ, և ներել իրենց բոլոր թշնամեաց, բ. հատուցանել իրենց պարտքերը և անխրաւ շահերը, գ. յայտնապէս դաւանիլ Կաթոլիկէ Հաւատքը, դ. պահել Աստուծոյ և եկեղեցոյ պատուիրանները, ե. տարին մէկէ աւելի անգամներ խոստովանիլ և հազարգուիլ, զ. համատարէն հագուիլ և հեռանալ ամէն աշխարհասէր և մեղսասիթ հաւաքոյթներէ, է. ժամակարգութեան ազօթից պարտելի ամէն օր ըստ կարելոյն, ինչպէս և ծով և պահք պահել որոշեալ ժամանակներ:

Այս պարզ այլ գերբնականօրէն ազդեցիկ միջոցներով ընտանե-

կան ու ընկերային բարօրութիւնը, բարուց մաքրութիւնն ու միջազգային խաղաղութիւնն էին որ կ'օգտուէին լայնօրէն: Միլիոնաւոր հոգիներ մեղքի շղթաներէ, գոհնիկ ու նուաստացուցիչ ունակութիւններէ ազատելով՝ կ'ապրէին օրինակելի կենցաղավարութեամբ և բարձր բարոյականով: Քանի'ներ կը մեծարուին իսկ այսօր խորաններու վրայ, իրենց զիւցազնութիւնք հաստատուած լինելով պաշտօնապէս Սրբազան Քահանայապետից վճիռներովն անսխալ: Ասոնցմէ են Ս. Լուդովիկոս Թ. Թագաւոր Ֆրանսայի, Ս. Ֆերդինանդոս, Թագաւոր Գաղղիլիոյ, Սրբուհի Եղիսարեթ զըշխոյն Հունգարիոյ, փաստարաններու պաշտպանն Ս. Իվոն, Սըրբուհի Վարդուհի վիդերպցի, Սրբուհի Յակինթա Մարիագոյի, Սրբուհի Մարգարիտա Գորգոնացի, Սրբուհի Փրանկիսկա Հինգ Վերաց. Երանելին Լուզելիո, և այլն, որոնք պարծանք են իրենց հայրենեաց ու մարդկութեան(\*) և Ասոնք նշանաւոր են ո՛չ միայն զիւցազնական զօրժքերով և յոգնաթիւ հրաշքներով, այլ նաև ստէպ խորիմաստ յայտնութիւններով և հոգեմայլ հոգեպարար գրուածներով: Հոս յիշենք Եւեթ Երանուհին Անճկա Ֆոլինեոյի, զոր արքա Լեւոն լը Մոնիէ կը նմանցնէ Տանդէի, և զոր գերահանճար մատնագիրն Էսնէպ էլօ կը բաղդատէ Ավիլայի անմահ կուսին, Սրբուհի Թերեզայի. ա՛յն աստիճան սճոյ գեղեցկութիւն և զազափարաց վսեմութիւն կը զարգարեն այդ երկնազգեցիկ կնոջ հրաշալի երկասիրութիւնները:

Դ.

Երբ աստուածային սէրը կը ախրէ հզօրեղապէս հոգւոյ մը մէջ, երբեք բաւ չի համարեր ինչ որ բրած է արդէն. այլ կ'ուզէ միշտ աւելի աշխատիլ, աւելի յոգնիլ, աւելի կրել, վասն զի կը մտածէ ըստ գեղեցիկ բացատրութեան Սրբոյն Բեռնարդոսի թէ «չափ սիրելոյ զԱստուծամէ է սիրել զնա անչափ» Փրանկիսկոս Յիսուսի Չարչարանաց յարատև մտածութեամբ կ'ուզէր կեանքի փոխարէն կեանք զոհել: Երեք անգամ տաժանելի ճամբորդութեամբ գնաց հեթանոս երկիրներ՝ տենչալով մարտիրոսութեան դափնիին: Բայց Նախախնամութիւնն այլազգ արամազրելով ստիպուեցաւ դառնալ յիտալիա: Ռ'րպիսի անպատում ուրախութեամբ հրճուեցաւ՝ երբ

(\*) Մեր Հեթում Թագաւոր Կիլիկիոյ Տան Գ. Կարգի Փրանկիսկեան արքայազուններու շարքէն է ի պարծանս այն Հայ-Կաթողիկէ Հարստութեան:

1220 Փետր. 16ին Ափրիկէի մէջ այդ ցանկալի պատուոյն արժանացան իւր հինգ աշակերտներն, Օդոն, Բեռնարդոս, Պետրոս Ս: Ճեմինիանոյի, Այուզոս և Ագուրցիոս: Հակառակ կրկնուած արգելքներու, քարոզեցին անվեհեր արիւթեամբ քրիստոնէութիւն ի Մարոզ. և զարհուրելի տանջանքներէ վերջ՝ արեան պերճախօս վիպութիւնը մատուցին Յիսուսի: Երբ Փրանկիսկեան նախավիպից հրաշագործ նշխարները մեծաշուք հանդիսիւ և խանդավառութեամբ բերուեցան ի Գալիմպրա, գրին Ս. Օգոստինոսի կանոնիկոսաց Ս. Խաչի եկեղեցւոյն մէջ: Հոն կ'ապրէր քսանեկինգամեայ երիտասարդ մը, բարեպաշտ ու արքայական ցեղէ, որ իւր բոյր կեանքն անցուցած էր անմեղութեան և անբժութեան մէջ: Մարոզի նահատակներու պատմութիւնն ներշնչեց վեհ փառասիրութիւն մը Ֆերնանտէզ ար Պուչեմի, որ խնդրեց կրտսեր եղբայրներէ ընդունիլ իրենց վանքը, և յետոյ Աւետարանի քարոզութեան համար զրկուել վայրենի կամ բարբարոս երկիրներ: Իբրև թանկագին նուէր ընդունուեցաւ, և Ս. Անտոն ճգնաւորին անուամբ ու պաշտպանութեամբ ուխտեց պահել Սրբոյն Փրանկիսկոսի կանոնները: Հակառակ իւր բուռն տենչանաց չկրցաւ մարտիրոսանալ. բայց իւր գիտութեան և քարոզութեանց համբաւով լեցուց Եւրոպան, և դարերէ ի վեր կը փայլի անդուլ հրաշագործութեամբ՝ տիեզերապէս սիրուած և յարգուած: Իւր պատկերաց առջև հարիւրաւոր ժողովուրդներ ի ծուներ կ'իջնեն ամէն օր, գինքը կ'օրհնեն ու կ'երգեն ո՛չ միայն կաթողիկէ շրթներ, այլ և հրեայք, հեթանոսք, բողոքականք և այլք ո՛չ սակաւք: Լուզիգիտանիոյ սոյն մեծագին գոհարը, Լիզպոնայի եղեմաբոյր ծագիկն կը կոչուի Ս. Անտոն Բատուացի: Անո՛ւն ինկելի նախասահմանուած կրկին անմահութեանց, — անմահութեան արտօրանաց այս հոգտին և անմահութեան երկնանուագ դաշնակութեանց:

Ե.

Սուրբերու գլխաւոր յատկանիչն է խստութիւն իրենց անձին, և քաղցրութիւն այլոց հանդէպ. սոյն դրուիչ բարեմասնութիւնը փայլեցաւ գերազանցօրէն Ս. Փրանկիսկոսի վրայ: Իւր անթերի պարտաճանաչութիւնը և կանոնապահութեան մշտարթուն նախանձախնդրութեան արգելք չեղան որ ցուցնէր ամեն առթիւ գութ և կարեկցութիւն տկար, հիւանդ, տգէտ, տկարամիտ և փորձուած հոգիներու հանդէպ: Մօր մը փափուկ ձեռքերով կը

դպչէր բարոյական ու հոգեւոր վէրքերու, և զանոնք սիտիւելու և բուժելու համար Յիսուսի աստուածագութ Սրտէն կը քօղէր դեղ և դուրբուրանք: Իւր օրինակաւ և խօսքերով կը յիշեցնէր մեծաւորաց՝ չափաւորութեան և խօսեմութեան սկզբունքներն, ըսելով՝ «անոնք համար պիտի տան մի օր Աստուծոյ դատատանին ո՛չ միայն անհոգութեանց, այլ նաև չափազանց խսուքեան մասին», որ հեռի յանցաւորներն ուղղելէ, կրնայ պատճառ մ'ըլլալ անոնց՝ վհատութեան, խտարտութեան և յամարեալ անզղջութեան: Չկար մէկն որոյ վիշտերն ու հառաչանք չգտնէին արձագանց իւր վն հոգւոյն մէջ, որ մեծաւ իրաւամբ կրնար գոչել հրայեզու Առաքելոյն հետ. «Ո՞ հիւանդանայ, եւ ո՛չ ես հիւանդանամ. ո՞ գոյքակղի, եւ ո՛չ ես սապանամ»: (Բ. կորնթ. ԺԱ., 29):

Բոյրութիւն գերբնական էր իւր սէրն ազքատաց, և նոյնը կ'ուզէր տեսնել ամէնտեւ մէջ. չէր հանդուրձեր երբեք որ իւր կրօնաւորներէն մին տհաճոյ ակնարկութիւն մ'ընէր թշուառաց մասին, որոնց վրայ կը նկատէր խորին երկիւղածութեամբ Աստուածորդւոյն գրկանքները: Կը յանձնարարէր ջերմապէս որ իւր քարոզիչներն յաճախ բացատրէին ժողովրդոց՝ սիրալոճար կամ զէթ հաժակերպեալ ազքատութեան մեծ արժէքը, որպէս զի ամէնքն ալ հեռի նկատելէ գոյն գծաւորութիւն մը և անպատուութիւն, համարէին մանաւանդ պատիւ և երջանկութիւն՝ հաւատայ աչօք նույնով Բեթղեմէմի, Նազարէթի և Գողգոթայի Զոհին: Ո՞րչափ կը տրամէր տեսնելով Հոգւոյն Սրբոյ պատգամն մտցուած ու անտեսեալ քրիստոնէից կողմանէ, «Զի վասն ձեր ազքատացաւ որ մեծատունն էր, զի գուք նորա ազքատութեամբն մեծաջիբ» (Բ. կորնթ. Ը., 9): Քրիստոսի ազքատութեամբ հարուստ եղած ենք ամենքս ալ, բայց, ախո՛ս, ո՞րչափ քիչէր կը հասկնան զայս:

Պէտք է սակայն կրկնել հոս թէ ազքատներու և ազքատութեան սէրն երբեք պատրուակ մը չեղաւ իրեն՝ արհամարհելու և անգոսնելու հարուստներն ու մեծամեծներ. ընդհակառակն համոզուած թէ նախախնամական զեր մը յանձնուած է անոնց մարդկութեան մէջ, կը պահաջէր որ ո՛չ ոք յարգանքի և երախտաղիտութեան պակասութիւն մը գործէր անոնց հանդէպ: Մահու չափ կ'ատէր ազահութիւնը, բայց կ'ուզէր այդ գծօխային ախտը բուժել Աւետարանի դեղերով, յաւիտենական ճշմարտութեանց յայտարարութեամբ, և ամենուրեք բազմապատկելով ինքնամուտաց ողորմութեան և անձնազո՛ւ աստատձեռնութեան օրինակներն յան-

կուցիչ և պերճախօս: Ընկերվարականք լաւ պիտի ընէին խորհիլ այսպիսի դասերու վրայ:

Իւր նախասիրութեան առարկայ էին մեղաւորք ամէն տեսակէ և ամէն դոյնէ. բարձր այլ դրական մտքի տէր, հա՛մախո՛ծ էր այն Քահանայապետին որ կ'ըսէ. «Յնորք մ'է ժողովուրդէն կատարելութիւն պահանջել»: Ուստի և կը յորդորէր իւր աշակերտներն ո՛չ ոքէ սպասել առաքինութիւն մը իւր կարողութենէն վեր, ու չգարմանայ, չլրդտիլի ի տես մոլութեանց, մոլորութեանց, աղիտութեանց, ամենազղի բարոյական անկուճներու և խեղճութեանց: Հետատես, ներողամիտ և լայնախո՛ծ, կ'ըսէր թէ այսօրուան մեղապարտք ու ոճրագործք կրնան վաղիւ դարձի գալ և գերազանցել զմեզ իրենց աղաշխարութեան խտութեամբն և բարուց մաքրութեամբ: Ո՞րչափ աւելի բարիք պիտի սփռէինք մեր շուրջ, և ո՞րչափ աւելի երկարատև արդիւնալից համբերութեամբ պիտի տանէինք մեր ընկերին թերութեանց, եթէ չմտնայինք գործնական կեանքի մէջ ամենալսեմ Սուրբի մը այս զգօնամիտ դասերը:

Մե՛ծ էր իւր յարգանքը և միշտ ու անյողողօղօքն գերբնա՜կան կրկրին հանդէպ. ո՛չ միայն անոնց որք քահանայապետի, ձերանաւորի, եպիսկոպոսի նման աստիճանաւորներ էին, այլ նաև պարզ քահանայից հանդէպ, որոնց ձեռքն իսկ համբուրել հրապարակաւ նուաաստութիւն չէր համարէր իրեն: Կրկին և կրկին կը յանձնարարէր ամէնուն և ի մասնաւորի իւր սիրելի ողբուց տեսնել հանապազ անոնց վրայ՝ հակառակ մարդկային ամէն հեքու՜թեանց և սխալանաց՝ Աստուծոյ փոխանորդի և սուրբ խորհրդոյ պաշտօնէի երկնաւանդ արժանապատուութիւնը: Ո՞րչափ տարրեր կը վարուէր նա՛ մոլի ու մտեւանդ, պիղծ ու վայրագ ազանդոււորներէ, որոնք բարենտրագութեան և նախանձախնդրութեան խարուսիկ քօղին ներքև տանելութիւն և նախատինք կը սորվեցընեն ժողովրդոց ըզզէմ կրօնի դեպոսններուն: Սուրբերն ամէն տեղ և ամէն ժամանակ համոզուած են թէ ճշմարիտ վերանորոգումն կը կատարուի խոնարհութեամբ, յարգանօք և օրինապահութեամբ, և թէ ինչպէս կ'ըսէր Փրանտացի հեղինակ մը. «Երբ խնդիրը բարեք ընելու վրայ է, խածանող խօսքերն աւելորդ են միշտ»: «Quand il s'agit de faire le bien, l'épigramme est toujours de trop.» L'abbé Vaccaudard, (Histoire de S. Bernard.)

2.

Ս. Փրանկիսկոս գիտուն մը չէր, ո՛չ փիլիսոփայ, և ո՛չ աստուածաբան, գոնէ այդ իմաստով որ կը արուի սովորաբար այս մեծաղբորդ բառերուն. բայց աւելի լոյս բերաւ մարդկային մտքին, և աւելի բարիք ընկերութեան քան ո՛ր և է գիտուն, իմաստասէր և աստուածաշահն: Սոյն փրկաւէտ, շինիչ ու քաղաքակրթիչ ազդեցութեան դաղտնիքը պէտք է փնտռել իւր գերագոյն սրբութեան մէջ:

Արդ սրբութիւնն առաքինութիւն մը չէ լոկ, այլ բարոյական ու գերբնական առաքինութեանց ամբողջութիւն մը: Սրբութեան երկնաշուք յիշատակարանը կը կառուցուի խոնարհութեան հիման վրայ, և կը պսակուի եղբայրասիրութեան և աստուածասիրութեան ազամանդով: Ո՞վ աւելի խոնարհ եղաւ քան Պետրոս Պետնարդոնէի որդին, որ հասած ամենաբարձր կատարելութեան կը կոչէր ինքզինք աշխարհի ամէնէն մեղաւորներէն մին: Ո՞ր աստիճան զօրաւոր էր հուսարքն անոր որ գիշեր ու ցօրեկ մտածելով Բեթղեհէմի մասերին, Գողգոթայի խաչին, Հաղորդութեան Զոհին, կը պաշտէր, կ'արտասուէր, կ'երգէր, կ'աղբարէր, և կը դանկար արիւն թափել ուղղափառ Հաւատքը տարածելու համար: Որո՞նչ յոյսն եղաւ երբեք աւելի հաստատուն և անդրդուելի քան անոր, որ ամէն բարիք սպասելով երկինքէն, արհամարհեց դրամն ու ստացուածք, և խանդավառ սիրահարն եղաւ մարդոց մէջ ամէնէն աւելի ատելի եղած բանի մը, — խոշտանգիչ, չարչարիչ, ստորնացուցիչ աղքատութեան: Եւ սրովհետեւ զխաւորաբար ազօթքով կուգան մեզ ամէն բարիք, ո՛չ մեծ ազօթով մը եւեթ, այլ ազօթքի անձնաւորումն եղաւ նա. «Non tam orans, quam oratio factus,» ինչպէս կը գրէ իւր ատաճին և ժամանակակից պատժին, Երանաշնորհ Թովմաս Սեղանո:

Իւր աստուածասիրութեան չափ ու սահման չգրաւ երբեք. ո՛րչափ աւելի կը մտածէր անհուն զեղեցկութեան, անսահման բարութեան, անստեղծ իմաստութեան, Բարձրելոյն բոլոր ստուրգելեաց վրայ, ա՛յնչափ աւելի սիրոյ բոցեր կը ժայթքէին իւր հոգւոյն աստուածավառ հնոցէն: Աէրը բոլորովին կերպարանափոխ ըրած էր զայն. հողանիւթ մահկանացու մ'ըլլալէ աւելի եղած էր սերովբէ մը հրաշունչ: Աէրը կը փոխէր ամէն դառնութիւն մեղրի. և հակառակ հիւանդութեանց ցաւերուն, մահացուցմանց խստու-

թեան անպատում և անպառ էր ուրախութիւնն իւր սրտին: Եւ սրովհետեւ Աստուծոյ սիրոյն անբաժան ընկերն է եղբայրասիրութիւնը, Փրանկիսկոս կը սիրէր մարդկութիւնն ողջ բովանդակ, առանց ցեղի և կրօնի խարութեան, չզաղբելով երբեք սիրել իւր թշնամիներն և առիթ փնտռելով ծառայելու և օգտակար լինելու անոնց: Զի գիտէր քաջ թէ ընկերասիրութիւնն յայնժամ եւեթ պատրասք մը չէ, երբ ստուգիւ կը տարածուի նաև մեր ոտխներուն և հալածչած: Մարդկային ո՛չ մի նենդութիւն, վատութիւն, ո՛չ մի ապերախտութիւն կրնար ցամքեցնել իւր սիրոյն աղբիւրն յորդառատ, մանաւանդ թէ ո՛րչափ աւելի կ'անարգէին զայն ապիրատք ոմանք, ա՛յնչափ կ'աճէր դորովանքն իւր սրտին, աչքերն յառած միշտ խաչուած Յիսուսի, որոյ մահամերձ շրթները բարեխօսելով ի նպաստ աստուածասպան դահձաց, թողին մեզ ներմա՛ն ու անոխակալութեան կտակն անմոռաց: Բանաստեղծ և սուրբ՝ դուրդուրանօք կը գիտէր անշունչ ու անխօս էակներն իսկ, բոյս, ծաղիկ, դաշտ ու պարտէզ, լիճ ու լեռ, գառն ու թռչուն, աստղեր, լուսինն ու արև, զօգցես կենակցելով մտերմօրէն և եղբայրապէս խօսակցելով անոնց հետ, ամէնէն մաքրափայլ քնարերգութեամբ զեղեցկելով, սիրազեղ քաղցրալեզու՝ կոչելով զանոնք «եղբայր և քոյր»:

Ի՞նչ բնկ հիմա իւր ջերմեանդութեան մասին առ Ս. Աստուածածին, զոր մասնաւորապէս կը պատուէր «Իշխոյ Հրեշտակաց և Անարատ Յղութիւն» տիտղոսներով: Գերազանցօրէն լուսաւորուած աստուածային լուսով գիտէր թէ եթէ կայ ստեղծուած մը ամէնէն աւելի արժանի սիրոյ, պաշտամունքի, հիացման, այն ալ արարչագործ ձեռին հրաշակերան է անզուգական՝ զոր եկեղեցին կը հռչակէ «Մայր զեղեցիկ սիրոյ, Գանձապետ ամենայն շնորհաց, Վերանորոգիչ և Փրկչակից մարդկային ազգի»: Արդարև մրցակիցն էր նա մեծին Սուրբ Բեռնարդոսի և մեր հրեշտակային Նարեկացւոյն, որով երկնաքարոզ աստուածագօջ «Եւ արդ ի վերայ այս քանեաց յուսահասութեանց» քնարժան պիտի չգտնէր անշուշտ իւր ոսկեղէն քնարին և սերովբէաչունչ հոգւոյն: Հա՞րկ է աւելցնել թէ սոյն անպին ժառանգութիւնն թողուց նաև իւր որդոց, բոլոր փրանկիսկեան կրօնաւորաց, որք ամէնէն նրբակիրթ ստանններէ մինչև ամէնէն անշուք զիւղերը և կիսավայրենի ափանց վրայ՝ Սաչի դրօշին հետ կանգնեցին Անարատ Յղացելոյն խորաններն ու պատկերներ: Ու այսպէս ուսուցին տիեզերքի համօրէն



թէ սէրերն Աստուածորդւոյն և Աստուածամօր անբաժան են միշտ իրարմէ: Երանի անոր որ չի մոռնար երբեք այս փրկաւէտ վարդապետութիւնը...:

Է.

Օր մը Փրանկիսկոս կը քարոզէր Սրբէտի կողմերը, և կ'ըսէր. «Ա՛յնչափ մեծ է սպասած բարիքս որ ամէն նեղութիւն ինձ հաճոյք կը թուի»: Կոմս Օրլանտի ազգուած այս խօսքերէն, որոց արժէքն անհամեմատօրէն աւելցած էր քարոզչին օրինակելի վարքէն, ուղեց անոր նուիրել իւր մէկ ստացուածքն, ընդարձակ գեւտին մը յարմարագոյն՝ աղօթից և կրօնաօրակիան կեանքի: Մոնղէ Ալվիլընիան է այն, Կոստանայի զաւառին մէջ, Սանդա Պիպիանա քաղաքէն երեք ժամ հեռու, անմարդածայն միևնութեամբ և երկնաբերձ բարձրութեան մը վրայ: Ամենասուրբ Կուսին Վերափոխման տօնէն վերջ, 1224ին, հոն քաշուեցաւ իր չորս աշակերաներով, —Մասէոյ, Ռուբէն, Անճելո և Լիւոն,— պարապելու աղօթքի, մտածութեան և մանացուցման: Առաջին օրերը անընդհատ աղօթից և իւր հողին լեցուած աստուածային սիրոյ անձառելի քաղցրութեամբ՝ ուղեց զիտնայ թէ ի՛նչպէս պէտք էր անցընել իւր կեանքի մնացած ժամանակն՝ աւելի կ'ու հաճօ լինելու համար անհուն Բարութեան և Մեծավայելչութեան: Առանց մանրամասնութեան յայտնուեցաւ իրեն թէ պարտէր պատրաստուիլ չատ տառապելու: Իսկոյն նա իրեց ինքզինքն ողջակէզ Աստուծոյ, յօժարափայլ կրելու ամեն տաղանայներ հողույ և ամէն չարչարանք մարմնոյ:

1224 Սեպտ. 14ի գիշերը, տօն Խաչվերացի, քաշուած լեռան մէկ կողմը, երկար ժամէք մտածեց Յիսուսի Չարչարանաց այնպիսի ջերմեանդութեամբ և բոցավառ սիրով, որ ամէն բան մոռցած էր այլևս, — բնութիւնը, մարդերն ու իրեր, և ինքզինքնին իսկ, — բոլորովին ըէկզմած և խորատոյզ հողով Սնոր մէջ որ իւր անձն սնայնացուց և գոնեց մեր սիրոյն և մեր փրկութեան համար: Յանկարծ տեսաւ վեցթեւեան սերովբէ մը, շողողուն կրակով և լոյսով, որ կ'իջնէր երկինքէն և կը մօտենար զէպի իննէն: Վեց թեւերէն երկուքն հովանի էին զլստն վերև, երկուքը կը ծառայէին թռչելու, և միւս երկուքը կը ծածկէին մարմինը: Արագաթուիչ եկաւ հողին երկնառաք, և կեցաւ օդին մէջ Փրանկիսկոսի առջև, որ տեսաւ այն ատեն անոր թեւերուն մէջէն մարդու մը կերպարանքը՝ ձեռքերն ու ոտքը բեւեռեալ խաչի մը վրայ: Աստուածային Խաչեցեալն կ'երևէր հրաշալիօրէն վեհ և զեղեցիկ: Այսօրինակ տեսարանի ս'առջև Փրանկիսկոս բոլորովին

ապշահար ու ահաբեկ կրողոր իւր բոլոր մարմնով. և ճանչնալով իւր գորովագութ Փրկիչն՝ ուրախութեան զգացնմաներով միանգամայն լեցուեցաւ, և խնդրեց սիրաջերմ աղերսանօք զիտնայ սոյն խորհրդաւոր տեսիլքին նշանակութիւնը: Հուսկ ուրեմն յայտնուեցաւ իրեն թէ նմանը չտեսնուած մարտիրոսութեան մը կոչուած է նա, կրելով մարմնոյ վրայ Խաչի չարչարանքը և սրտին մէջ սերովբէի մը գորովանքն անպատու մ սիրաբորբոք: Լսեց նաև խօսքեր, որոց գաղտնիքը ո՛չ ոքի ուղեց յայտնել երբեք, և տեսիլքն աներևույթ եղաւ, զրոշմելով Փրանկիսկոսի ձեռքերուն մէջ, ոտից ու կողին վրայ Յիսուսի հինգ վերքերն այն ձեւով և գոյնով որովք վիրաւորուած էր կուսածին մարմինը Խաչին վրայ: Ամէն զգուշութիւն գործածեց սոյն անլար հրաշքն ուրիշներէն ծածկելու համար. ի կենդանութեան հազիւ մէկ քանի մտերիմներ եւեթ, —այն ալ մեծ դժուարութեամբ,— կրցան տեսնել զայն: Բայց յետ մահուան հազարաւոր անձինք, — ժողովուրդ, կրօնաւոր, քահանայ, եպիսկոպոս —, իրենց աչքերով տեսան և ձեռքերով չօշափեցին այդ հրաշալի վէրքերն, որոնք երկնաւոր Վարդապետին ամէնէն կատարեալ նմանութիւնը տուին այդ անզուգական Սուրբին: (\*)

Նահապետն Ասիղիի այնուհետև զիւ երկու տարի ապրեցաւ, ընդհանուր սիրոյ և մեծարանաց աւարկայ: Որչա՛փ տարրեր էին

(\*) Այս մեծ հրաշքին տօնը կը կատարէ Եկեղեցին ամէն տարի Սեպտ. 17ին: Ամէնէն զետական, ամէնէն պատկառելի եւ անսխալ հեղինակութիւն է այս, զոր երբեք կարելի չի գտնել արեւու ժախ: Իսկ ի՞նչ կ'արժեն այն ինքնակոյ զատուարներն, որոնք քննադատութեան ամենալուրջ անուամբ սրբապիղծ կատակերգութիւններ կը խաղան, և ազլաներու կամ իրենց պէս կէս-գիտուններու միամտութիւնը կը շահագործեն անխիղճ պէտք էր ունենալ Ռոմանի մը անմարին ստախտութիւնը եւ շիական լրբութիւնն ուրանալու համար ժամանակակից հայնատես վկաներէ և արժանաճառատ պատմագիրներէ նստատուած եւ հնչակուած այսպիսի մեծ զէպր մը: Պ. Բոյ Ասպաղիէ, բանապաշա բողոթական, կ'ընդունի պատմականօրէն անժխտելի իրողութիւնը, միայն անընդունելի եւ անմարտելի մեկնարանութեանց կը դիմէ աներկիւղ անոր գերբնական արժէքն ո՞նչացնելու համար, ինչպէս կ'ընէին մի օր Պաղեստինի Հրեաներն Յիսուսի րացայայտ եւ աստուածային հրաշքներուն առջև: Մտղթներ որ Պ. Սապաղիէի ճշմարտասէր հոգին կարենայ ընդհուպ երգել Տանդէի հանարին հետ.

- «Nel crudo sasso intra Cevere ed Arno
- «Da Cristo prese l'ultimo sigillo,
- «Che le sue membra du'anni portarno. (PARADISO), canto XI.

այս տարիներն իւր գարձին առաջին տարիներէն, ուր ամէն ոք — բաց ի իւր մօրմէն —, բարեկամք, ազգականք, եղբայր և հայր կը կարծէին իրաւունք ունենալ անարգելու, հեղնելու, հալածելու զայն՝ կոչելով «գիւտար, անմիտ և յիմար»:

Տեսնելով զինքը մահուան մօտ քաշուեցաւ իր սիրելի սրբավայրը, Հրեշտակաց Թագուհւոյն եկեղեցին, Santa Maria degli Angeli, — որ եղած էր արդէն նշանաւոր ուխտատեղի այն Լիակատար Ներողութեամբն զոր Յիսուս պարգեւած էր՝ յօգուտ հաւատացելոց՝ իր անձնուրաց ծառային աղերսանաց, Ս. Աստուածածնի անդանալի ամենակարող միջնորդութեամբ: Վերջին անգամ մ'ալ օրհնեց իւր ծննդավայրն Ասիզի, որ իրմով եղած էր և պիտի ըլլար առաւել ևս նախանձելի ու շքեղ բոլոր քաղաքներու մէջ, և զերազանցօրէն արժանի արեղերական համակրանաց: Գիտուններու և արուեստագէտներու, արքայից և կայսերաց դամբարանները պիտի նսեմանային մի օր իւր Հնորձապերճ հոյակերտ շիրմին առջեւ: Օրհնեց իւր ներկայ ու ապագայ սրբիները, բարեկամներն ու բարերարները, և Յովհաննու Աւետարանչի ժԳ. զլուխը կարգացնելով իր աշակերտներէն միոյն, եղեմազուարթ հրճուանօք աւանդեց իր մաքրասուն հրեշտակային հոգին ի ձեռս Արարչին, 1226 տարւոյ Հոկտեմբեր Յին:

Իւր բարեկամն ու պաշտպանը, ծիրանաւոր Բւկոլէն, որ եղած էր Գրիգոր Թ. Քահանայապետ, զրաւ զայն պաշտօնապէս ի շարս սուրբ խոստովանողաց, առանձին յորդոր կարգաւով քրիստոնեայ աշխարհին յարգութիւն և պաշտօն մատուցանել անոր, զոր այն պատիճան արաստվոր սքանչելիօք, յայտնութեամբք ու տեսիլքներով յարգած ու պատուած էր արդէն երկինք: Փա՛ռք իւր անմահ յիշատակին, սէ՛ր և երախտագիտութիւն իւր պաշտելի անուան: Իցի՛ւ իւր օրինակն յանկուցիչ և աղերսանքն աստուածահաճոյ յարուցանէին նմանողներ իրեն՝ նաև մեր սիրելի, յոգնավիշտ ու սրբակորօտ Հայութեան մէջ: Ամէն:

ՆՆՐՍԷՍ-ՅՈՎՍԷՓ Վ. ՓԱՓԱՋԵԱՆ  
Բրինգիբօ

1926 Սեպտ. 24 Ի տօնի Աստուածամոր



